իւղ զուարթացուցիչ, երիւարս արագաքայլ, և եղն արաւրաձիգ։

Իսկ անախտութեամբն և առողջութեամբն վեհագոյն է. զոր կարծեմ վասն զանազան ծաղկանցն, և զաւրաւոր արմատոցն լինել, և կամ յաղագս աղենահոս առուոցն։ Քանզի որ բընակեալ են զափամբ նոցա՝ դեղ կենաց ասեն ըմբողացն զնա ոչ գոլով ի նոսա մահ տարաժամ. զի որ հարիւրամեան վախճանեսցի ըստ բանին Եսայեա յորջորջեսցի։[1] Սակս որո մարդաշատեալ և բազմացեալ գեղք մեծամեծք։ Յորոց մի է և իմ պսակաւորիս երկրորդ Բեղլահէմն. նա տուն հացի և սա հացիս, ի նմանէ Դաւիթ շառաւեղ Եսսեայ, և ի սմանէ Մեսրոբ ծաղիկ ի Վարդանա. անտի տեսանող՝ և աստի տեսանող. ի նմա ծնունդ հացն կենաց մահահալածն կերրողաց, և ի սմա ծընունդ՝ կերակրողն զբանն կենաց. նմա պատճառ անունաղրութեան՝ ճաշակումն հացին Իսրայէլի՝ յետ սգոյ կենացկողին, և սմա բաղաւտ Նոյի նահապետին յետ հարուածոյ համատարած հեղեղին։ Թէև բաջադի Ղուսպիոդորոս ի Տարբանա կոչիլ Տարաւն՝ Հացիք և Ցրաւք,[2] բայց մեք ճշմարտութեանն հետե-

---

1. Տես. Եսայ. գլ. Կե. 20։

2. Խոր. գր. Ա. գլ. Զ. «Ղուսպիադորոս ասաց.. իսկ